

Հաստատվել է

Կարա-Մուրզայի անվան պետական

երաժշտական քոլեջի կառավարման

խորհրդի

նիստում

*Խորհրդի նախագահի
Վ. Վաթնիկ - Վեդիկյան*

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

Գյումրու <<Կարա-Մուրզայի անվան պետական
երաժշտական քոլեջ>> ՊՈԱԿ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

2014 – 2019թթ.

Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ի
զարգացման ռազմավարական ծրագիր



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Նախաբան
- Քոլեջի առաքելությունը և տեսլականը
- Ռազմավարական նպատակներ
- Ռազմավարական նպատակի ուղղությունները
- Կրթական գործունեություն
- Դիմորդներ և ուսումնառողներ
- Հանրային ներգրավում և ծառայություններ
- Որակյալ ենթակառուցվածքներ
- Կադրային ներուժ
- Որակյալ ծառայություններ
- Տինանասական կայունություն

Կարա-Մուրգայի անվան պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ի
գարգացման ռազմավարական ծրագիր



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Գյումրու Կարա-Մուրգայի անվան պետական երաժշտական ուսումնարանը հիմնադրվել է 1934թ. Լենինականում: Այն Շիրակի մարզի միակ միջին մասնագիտական երաժշտական կրթօջախն է, որը կերտել է արդեն 80 տարվա պատմություն՝ տալով նշանավոր շրջանավարտների մի մեծ սերունդ:

1954թ. ուսումնարանը անվանվել է հայ բազմաձայնության հիմնադիր Քրիստափոր Կարա-Մուրգայի անվամբ:

2004թ. ուսումնարանը ստացել է պետական ոչ առևտրային կազմակերպության /ՊՈԱԿ/ կարգավիճակ, իսկ 2006-ին՝ վերանվանվել է՝ **ԳՅՈՒՄՐՈՒ «ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ:**

Հիմնադրման առաջին իսկ օրվանից երաժշտական ուսումնարանում գործել են «Դաշնամուր», «Լարային գործիքներ», «Փողային և հարվածային գործիքներ», «Ժողովրդական գործիքներ», «Երգեցողություն» մասնագիտությունները:

Ապա ավելացել են «Երգչախումբավարություն», «Երաժշտության տեսություն» իսկ վերջին տարիներին՝ «Էստրադային արվեստ», «Դիզայն», «Պարարվեստ» մասնագիտությունները:

Քոլեջում գործող համույթներն են

- Երգչախումբ [երկձայն]
- Ժող.գործիքներ

Կարա-Մուրգայի անվան պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ի
զարգացման ռազմավարական ծրագիր



**ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Քոլեջի հիմնական առաքելությունն գիտելիքի ստեղծումն է, փոխանցումը և տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սեփական կանոնադրության համաձայն:

Տարածաշրջանի միակ մասնագիտական, պետական երաժշտական քոլեջը տալիս է կրթություն՝ նպաստելով մշակութային կյանքի զարգացմանն ու տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով համալրելուն:

Տեսլականը

Լինելով տարածաշրջանի միակ երաժշտական, պետական քոլեջը՝ իրականացնելով միջին մասնագիտական ծրագրեր ՀՀ օրենսդրության սահմանված կարգով, քոլեջի տեսլականն է կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դառնալ կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն՝ ստանձնելով բարեփոխումներն առաջնորդող, տարածողի դերը:

Ռազմավարական նպատակն է

Ուսումնական հաստատությունների մեջ լինել առաջատար քոլեջներից մեկը, որը կտրամադրի երաժշտական կրթություն՝ կրթական ծրագրերով և ժամանակակից մեթոդներով՝ պահելով հարուստ ավանդույթները կիրթի մասնագետներ, ովքեր կհասնեն հաջողության գիտակցելով իրենց ընտրած մասնագիտության կարևորությունը:

Ռազմավարական նպատակի ուղղությունները

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
2. ԴԻՄՈՐԴՆԵՐ և ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ
3. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
4. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
5. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ
6. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

1. Կրթական գործունեություն

ՆՊԱՏԱԿ Պահպանելով կրթական չափանիշները՝ (հիմնված լավագույն փորձի վրա) հնարավորություն տալ սովորողներին՝ իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ուսումնական ծրագրեր:

ԽՆԴԻՐ 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ:

- . իրականացնել մասնագիտությունների ճշգրտում՝ առաջնորդվելով մեթոդական ուղենիշներով, կազմել նոր մասնագիտությունների համար համապատասխան կրթական ծրագրեր՝ հիմք ընդունելով որակավորումների ազգային շրջանակը:
- . Իրականացնել կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը ուսումնասիրելու համար մի շարք հարցումներ՝

Ա. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում

Բ. - «Քոլեջում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցում

Գ. ներդնել էլքային կրթական արդյունքներով համալրված առարկայական ծրագրերը, կիրառել դասընթացների փաթեթները (պորտֆոլիո), որպես կրթական գործընթացում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիա և որը ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում դասախոսի գործունեության և ձեռքբերումների հավաքածու: Այն պարունակում է դասընթացի վարման ռազմավարությունը /ստրատեգիան/ և մարտավարությունը /տակտիկան/, պլանավորվում է դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացվում է դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, և կողմնորոշված է ոչ միայն ուսանողի գնահատմանը, այլ նաև նրա անհատական մասնագիտական աճի ապահովմանը:

ԽՆԴԻՐ 1.2 Ստեղծել որակի ներքին ապահովման հանձնաժողով՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան, որի նպատակն է իրականացնել ինքնքրվելուծություն, որի ընթացքում մշակվում են մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և կարգեր:

- Որակի ներքին կրթական գործընթացների ապահովման քաղաքականություն
- Կառավարման խորհրդի գործունեության կանոնակարգ
- Դասալսումների անցկացման կանոնակարգ, դասի գնահատման հարցաթերթ և դասալսման արդյունքների վերլուծության ձևաթերթ, քննական հանձնաժողովների հաշվետվության ձևաթերթ
- Ցիկլերի գործունեության կանոնակարգ
- Տնօրինական խորհրդի կանոնակարգ

- Ընդունելության կարգ
- Պաշտոնի նկարագրեր
- Կադրերի գործունեության կարգ
- Վարչական մասի կանոնակարգ
- Տնօրենի ընտրության կանոնակարգ
- Մանկավարժական կազմի ընտրության կարգ
- Ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ
- Գնահատման կանոնակարգ
- Ստեղծել մի շարք մեխանիզմներ, ուսանողական հարցումներ, դասալսումներ՝ փոխադարձ , բաց, ցիկլի վարիչի կողմից

ԽՆԴԻՐ 1.3

Հնարավորության սահմաններում ստեղծել էլեկտրոնային գրադարան ուսումնական գործընթացը հեշտացնելու նպատակով:

- Ստեղծել վեբ-կայք
- Բարելավել և ավելացնել ուսումնական գործընթացի իրականացման համար կիրառվող նյութատեխնիկական բազան
- Ստեղծել համակարգչային լսարան

2. ԴԻՄՈՐՂՆԵՐ և ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

Ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում: Ապագա դիմորդների նախաքոլեջային աջակցման համակարգի զարգացում: Ուսումնառողների ներգրավում և առաջընթացի ապահովում քոլեջի միջավայրում:

ԽՆԴԻՐ 2.1 Ի նպաստ դիմորդների ներգրավման՝ քոլեջի դրական վարկանիշի ստեղծում:

- Իրականացնել լրատվամիջոցների, մշակութային ու կրթական հաստատությունների հետ կրթական և մշակութային ուղղվածությամբ համատեղ նախագծեր:
- Բարձրացնել քոլեջի դրական վարկանիշը և նպաստել գիտելիքի մասսայականացմանը, կազմակերպել քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական մշակութային ձեռքբերումներին նվիրված միջոցառումներ:
- Հարստացնել քոլեջի հիմքի վրա ստեղծվող կրթական որակյալ ծրագրերի բազան՝ լրացուցիչ, շարունակական կրթական ծրագրեր, բանավեճեր և այլն, ապահովել քոլեջի ուսանողների ներգրավվածությունը կրթական ծրագրերի իրականացման գործում:
- Քոլեջի կրթական ստորաբաժանումներին տրվող կողմնորոշման աշխատանքներ

ԽՆԴԻՐ 2.2 Մշակել և կազմակերպել հանրակրթական և երաժշտական դպրոցների աշակերտների շրջանում արթնացնել հետաքրքրություն մշակույթի հանդեպ :

- Կազմակերպել մշակութային և կրթական հաստատություններում հետաքրքրության աճին նպաստող միջոցառումներ (համերգային ծրագրեր, մրցույթներ, բաց դասեր և այլն):
- Մշակույթով հետաքրքրված աշակերտներին ներգրավել քոլեջում տեղի ունեցող միջոցառումներին:
- Սոցիալական ցանցերում, քոլեջի վեբ - կայքում տեղադրել տեղեկատվություն ընդունելության վերաբերյալ՝ դիմորդների ներգրավման նպատակով:
- Անցկացնել մասնագիտական խնդիրների վերաբերյալ հանդիպումներ, կոնսուլտացիաներ:

ԽՆԴԻՐ 2.3 Մշակել միջոցառումների համակարգ ուսանողների շրջանում ուսխորհրդի դերի բարձրացման և ուսանողական ինքնավարության ընդլայնմանը՝ նպաստելով ուսանողակենտրոն համակարգի զարգացմանը:

- Տրամադրել ուսանողներին համապատասխան ռեսուրսներ հանրապետությունում վարպետության դասերին, փորձի փոխանակման, վերապատրաստման մասնակցելու համար:
- Մշակել ուսանողների գործունեության գնահատման համակարգ:
- Մշակել ուսանողների ակտիվ գործունեություն ծավալող լավագույն ուսանողների խրախուսման կարգ:

3 ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակ Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, մշակութային առաջընթացին՝ նպաստելով քոլեջի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

Խնդիր 3.1 Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում քոլեջի ներգրավումը:

- Քոլեջի դրական հեղինակության պահպանման և ամրապնդման, նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով իրականացնել տեղեկատվության տարածում և գովազդային-լրատվական, քարոզչական բազմազան մեխանիզմների ստորոգծում:
- Պաշտոնական կայքի միջոցով առանձնահատուկ լուսաբանել քոլեջի ցիկլերի գործընթացները, իրադարձությունները, կազմակերպված միջոցառումները, հարցազրույցները, տեղադրել հյատարարություններ, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորություններ:

4 ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Նպատակ Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից քոլեջ և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Խնդիր 4.1 Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական բազան Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաձյուղի ուսումնական բազան՝ կրթական ծրագրերի կարիքներին համապատասխան:

- Շենքի առաջին հարկը միացնել քոլեջին
- Վերանորոգել քոլեջը
- Կառուցել համերգասրահ պատշաճ բեմահարթակով
- Ունենալ լոկալ ջեռուցման համակարգ
- Համակարգչային լսարան
- Թեքահարթակ
- Գրադարանի տարածքի ընդլայնում

5 ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ

Նպատակ Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

Խնդիր 5. 1 Համալրել դասախոսական կազմը:

- դասախոսական կազմի զնահատում

- դասախոսական կազմի համալրումը՝ տարիքային գնահատում, սեռային գնահատում
- ուսանողական համապատասխան հարցումներ
- դասալսումների տարբեր ձևեր
- դասախոսական կազմի պաշտոնների կանոնակարգը
- վերապատրաստման դասընթացների իրականացում
- գործուղումներ
-

Խնդիր 5.2. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ: Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

- Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար:
- Մշակել աշխատանքի նկարագրեր ուսում նաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:
- Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ և այլ աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ:

6. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակ Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը:

Խնդիր 6.1 Բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ծառայություններից:

- Ուսանողների բավարարվածության գնահատում քուէջից ստացած կրթությունից
- Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքման գործընթացի կանոնակարգման և իրականացման համար
- Մրցույթների անցկացում
- Facebook սոցիալական ցանցում ստեղծել էջը՝ քուէջի գործունեության վերաբերյալ
- Ստեղծել է քուէջի վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ համակարգչային բազա
- Տվյալների հավաքագրման գործընթացին զուգահեռ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ իրականացնել հանդիպումներ, կայքում տեղադրել հայտարարություններ տարբեր կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցություն իրականացնելու համար՝ մեր լավագույն ուսանողներից և շրջանավարտներից կազմակերպությանն անհրաժեշտ մասնագետներ ընտրելու նպատակով:
- Տնօրենության կողմից խրախուսել ուսանողական խորհրդի քուէջի ուսանողների կողմից իրականացված միջոցառումները

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակ Նախաձեռնել քոլեջի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնում և դրանց բազմազանեցում: Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Խնդիր 7.1 Մեծացնել քոլեջի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազանեցնել դրանց աղբյուրները: Քոլեջը կրթական, հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում շուկայավարման և առևտրացման քաղաքականություն չունի: Քոլեջը չունի արտաբյուջետային միջոցներ: Նախատեսվում է կազմակերպել մրցույթ-փառատոներ ,համերգներ արտաբյուջե ձևավորելու համար:

Խնդիր 7.2 Գտնել նվիրատու կազմակերպություններ, շրջանավարտներ ,անհատ հովանավորներ Մասնաճյուղում ստեղծել շրջանավարտների տվյալների գրանցման, տեղեկատվական և հաղորդակցության համակարգ:

Խնդիր 3 Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետությունը

Քֆինանսական վիճակը բավականին լավ է, մասնաճյուղում երբևէ աշխատավարձի ուշացում չի եղել, մասնաճյուղը ոչ մի կազմակերպության և հարկային պարտք չունի: Մասնաճյուղի ֆինանսական վիճակը կայուն է:

